

Վաղարշակ Մատիկյան
Նարեկ Հակոբյան

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

7



ՍՈՍՏԻՍ

ANTARES



1

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ: ՏՐԴԱՏ III ՄԵԾԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ



Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն:

Այս թեմայում՝

- ◆ Հայ առաքելական եկեղեցու հիմնադրումը:
- ◆ Տրդատ III-ի աշխարհայացքային փոփոխությունները:
- ◆ Գրիգոր Լուսավորչի և Տրդատ III-ի համատեղ գործունեությունը:
- ◆ Սկզբնաղբյուրների քննական ընթերցում:
- **Պատմաբանի նոթատետր՝** առաքյալ, սրբապատկեր, ավանդություն, ձեռնադրություն, ուխտել, միանձնուհի բառերի բացատրությունը:

Երկու առաքյալները Հայաստանում:

Առաջին դարում հայոց իշխանները, թագավորները հեթանոսներ էին և թշնաբար էին տրամադրված քրիստոնեության նկատմամբ, քանի որ այն սպառնում էր իրենց համար սովորական դարձած կենցաղին, կարգերին: Չնայած այդ հանգամանքին՝ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները առաջին դարում սկսում են քրիստոնեություն տարածել Հայաստանում: Առաքյալների շնորհիվ քրիստոնեությունը սկսում է տարածվել Հայաստանի տարբեր հատվածներում: Նրանք բազում մարդկանց են մկրտում, թե՛ ռամիկների, շինականների,



Սիրելի՛ աշակերտ, քեզ համար բոլոր անհասկանալի բառերի բացատրությունները կարող ես գտնել այս կայքում: Հարկավոր է մուտք գործել կայք, որոնման տողում գրել անհասկանալի բառը, ապա աջ կողմի տողերի հղումներով անցնելով բառաներում գտնել տվյալ բառի բացատրությունը:



Առաքյալ(ներ) – Սուրբ Գրքում լայն իմաստով այսպես են կոչվում Աստծո կողմց առաքված մարդիկ, հատկապես Հիսուս Քրիստոսի 12 աշակերտները, որոնց Նա ուղարկեց աշխարհի տարբեր ծայրերը՝ քարոզելու իր ավետարանը:





Ուշադրություն դարձրեք նաև...

Թեմայի նկար 1-ում Թադեոս առաքյալի ծախ ծեռքում քրիստոնեական սուրբ մասունք գեղարդն է, որը Հայաստան է բերվել նրա կողմից: Մեկ այլ մասունք է ներկայացված նկար 4-ում. դա Գրիգոր Լուսավորչի աջն է: Սրբերի մասունքները կարևոր են քրիստոնյաների համար: Դրանք պահվում են տարբեր եկեղեցիներում և տվյալ սրբի հիշատակության օրը դուրս են բերվում խորանի առջև, որպեսզի մարդիկ հնարավորություն ունենան մոտենալու համբուրելու մասունքը, դիպչելու, խնդրելու սրբի բարեխոսությունը:

Ավանդություն – սրբազան, գրավոր կամ բանավոր ավանդված աստվածային, մարգարեական, առաքելական պատվիրան կամ պատմություն, ծես և օրենք, որի վրա հաստատված է Ընդհանրական եկեղեցին: Ավանդությունը տրված է հիշելու, անխաթար պահելու, կիրառելու, նրանով առաջորդվելու և սերնդեսերունդ փոխանցելու համար:

արհեստավորների ու առևտրականների, թե՛ իշխանական ընտանիքների ներկայացուցիչների: Վերջիններիս շնորհիվ քրիստոնեությունն էլ ավելի է տարածվում Հայաստանում: Սակայն երկրի կենտրոնական իշխանությունը դեռ հեթանոսական հավատալիքների կրող էր:



Աշխատանք պատմական տեքստի հետ:

Թադեոսի գործունեության մասին պատմող պատմական տեքստ:

Ծանոթանանք մեջբերված տեքստին՝ զուգահեռ ընթերցելով ստորև ներկայացված պնդումները:

Մ. Օրմանյան Ազգապատում

Ըստ ավանդության, երբ Թադեոս առաքյալը գալիս է հայոց Եդեսիա քաղաքը, նրան ուղեկցում են Աբգար V-ի մոտ: Տեսնելով Թադեոսին՝ Աբգարն ուրախանում է, քանի որ հասկանում է, որ նա Քրիստոսի խոստացած բժիշկն է, որ եկել է իրեն բժշկելու: Թադեոսի քարոզի ժամանակ Աբգարը հավատքով է լցվում և հրաշքով բժշկվում իր հիվանդությունից: Աբգար թագավորը շատ թանկարժեք նվերներ է ընծայում Թադեոսին, սակայն նա մերժում է և փոխարենը խնդրում Աբգարին թող տալ իրեն քրիստոնեությունը քարոզել Եդեսիայում: Քրիստոնեությունը հաստատվում է Եդեսիայում: Իշխաններ ու իշխանուհիներ, հասարակ մարդիկ խմբերով քրիստոնյա են դառնում, եկեղեցիներ են կառուցվում և ավետարանը զորանում է Եդեսիայի մեջ:

- Ինչպես երևում է մեջբերված տեքստի 1-2 տողերից, Աբգար թագավորը մինչև Թադեոս առաքյալի Հայաստան գալն արդեն իմացել է Քրիստոսի մասին: Ըստ Խորենացու, դրա պատճառն այն էր, որ Քրիստոսը բազմաթիվ հրաշքներ է գործել, շատ ծանր հիվանդների բժշկել, և այդ լուրերը արագորեն տարածվել էին շրջակա քաղաքներում և երկրներում:
- Մեջբերված տեքստի 2-3 տողերից հասկանալի է դառնում, որ Թադեոս առաքյալը չէր եկել Հայաստան միայն Աբգարին բժշկելու, այլ նաև



ժողովրդի շրջանում քրիստոնեություն տարածելու առաքելություն իրականացնելու:

- Ինչպես կարելի է ենթադրել 3-4 տողերից, քրիստոնեությունը իսկապես լայն տարածում է գտել Եդեսիայում և հարակից տարածքներում, քանի որ եկեղեցիների կառուցումը ենթադրում է միջոցների տրամադրում, ինչը հնարավոր էր միայն այդ հարցում հասարակական որոշակի համերաշխության առկայության պարագայում: Այդ մասին վկայում է նաև այն հատվածը, ըստ որի ոչ միան իշխաններն են այստեղ ընդունում քրիստոնեություն, այլ նաև ժողովրդի մյուս խմբերը:

Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները, փաստորեն, առաջին դարում հիմնադրում են հայոց եկեղեցին, որը նրանց՝ առաքյալների, շնորհիվ կոչվում է առաքելական: Թադեոսն ու Բարդուղիմեոսը նահատակվել են Հայաստանում, նրանց նահատակության վայրերում կառուցվել են եկեղեցիներ:

Հավատքի նվիրյալ միանձնուհիների փախուստը Հռոմի հեթանոս կայսրից:

I-III դարերի ընթացքում հայոց պետությունը հեթանոսական էր և չէր նպաստում ժողովրդի քրիստոնյա դառնալու գործին: Իրավիճակը փոխվում է, Տրդատ Գ-ի օրոք (287-330թթ): Նրա գահակալությունն ամրապնդվում է 298թ-ին կնքված Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագրով, որով ավարտվում է նաև հռոմեապարսկական հերթական պատերազմը: Իր իշխանության սկզբում Տրդատ Գ-ն նույնպես թշնամաբար էր տրամադրված քրիստոնեության և քրիստոնյաների նկատմամբ, սակայն կարճ ժամանակ անց ամեն ինչ փոխվում է: 300թ-ին Հռոմից Հայաստան են գալիս երեսուներեք քրիստոնյա միանձնուհիներ:

Սրբապատկեր – 1. Հիսուս Քրիստոսի, Մարիամ Աստվածածնի, Մանկան հետ Աստվածամոր, սրբերի, Ս. Գրքի դրվագների և վարքերի պատկերներ: 2. Միջնադարյան պաշտամունքային նկարչության տեսակ:





Աշխատանք պատմական տեքստի հետ:



Միանձնուհիների՝ Հայաստան գալու պատճառները: Ծանոթանանք մեջբերված տեքստին՝ զուգահեռ ընթերցելով ստորև ներկայացված պնդումները:

- 1-2 տողերից կարելի է ենթադրել, որ Դիոկղետիանոս կայսրը քրիստոնյա չէր, քանզի ցանկանում էր ամուսնացած լինելով երկրորդ անգամ ամուսնանալ:
- 3-4 տողերից կարելի է հասկանալ, որ միանձնուհիները ուխտ էին արել իրենց կյանքը նվիրել քրիստոնեական ճգնակեցությանը: Իսկ 5-6 տողերից իմանում ենք, որ միանձնուհիները հավատարիմ են մնում իրենց ուխտին և չեն ցանկանում ենթարկվել Դիոկղետիանոսի կամքին և ընկնել նրա ծառաների ձեռքը: Այդ իսկ պատճառով նրանք հեռանում են Հռոմից:
- Կարևոր է նկատել, որ միանձնուհիները չեն գալթակվում կայսեր հետ բարեկամանալու և նրա բարեհաճությունը վայելելու հնարավորությամբ: Կարելի է հասկանալ, որ նրանք հաստատակամ և իրենց սրբություններին ջերմեռանդորեն նվիրված խիզախ աղջիկներ էին:

Տեսնենք արդյոք կիրաժարվեն միանձնուհիներն իրենց ուխտից, երբ հանդիպեն մի շարք վտանգների ու դժվարությունների:

Մ. Չամչյան, Հայոց պատմություն

Հռոմի Դիոկղետիանոս կայսրը, չնայած ամուսնացած էր, 1
 ցանկացած երկրորդ կին ունենալ և հրաման տվեց, որպեսզի կայսրություն տարբեր հատվածներ ուղարկված իր ծառաները պատկերեն գեղեցկատես աղջիկների դիմանկարներ, որպեսզի ինքը ընտրություն կատարի: Նրա ուղարկած ծառաներն անմիջապես գործի անցան և տեսնելով գեղեցկատես աղջիկների անմիջապես պատկերում՝ էին նրանց հատուկ տախտախների վրա, որպեսզի ցույց տան կայսրին: Շուտով նրանք մի լեռնոտ վայրում՝ հայտնաբերում են մի մենաստան, 5



Ուշադրություն դարձրեք նաև...

Ուշադրություն դարձրեք թեմայի նկար 2-ին, 3-ին և 4-ին, այստեղ ներկայացված են սրբապատկերներ: Սրբապատկերները նույնպես շատ կարևոր նշանակություն ունեն քրիստոնյաների համար: Դրանց բնօրինակները նույնպես պահվում են եկեղեցիներում կամ ամրացված են եկեղեցիների պատերին:


Ըստ մատյաններում և այլուր հիշատակվող ավանդությունների և վկայությունների մատենների և սրբապատկերներին ջերմեռանդ աղոթքներով մոտենալով հնարավոր է բժշկվել, ապաքինվել: Ե՛վ սրբապատկերները, և՛ մատենները տարածվել են հայոց աշխարհում քրիստոնեության սկզբնավորումից սկսած՝ դարից:



որտեղ ապրում էին իրենց կյանքը աղոթքով անցկացնել ուխտած միանձնուհիներ: Նրանց գլխավորի անունը Գայանե էր, իսկ միանձնուհի թվում էր Հռիփսիմե անունով մի շատ գեղեցիկ աղջիկ: Նրան տեսնելով՝ Դիոկղետիանոսի ծառաներն անմիջապես պատկերում են Հռիփսիմեին և տանում են պատկերը ցույց տալիս կայսրին: Տեսնելով Հռիփսիմեի պատկերը կայսրը շատ է ուրախանում և հրամայում է հարսանեկան պատրաստություն տեսնել, իսկ մենաստան այցելած ծառաներին հրամայում է գնալ և Հռիփսիմեին ուղեկցել պալատ: Իմանալով կայսեր մտադրություն մասին՝ միանձնուհիները Գայանեի գլխավորությամբ որոշում են հեռանալ մենաստանից, որպեսզի չընկնեն կայսեր ծառաների ձեռքը:

Ճանապարհին միանձնուհիներից շատերը հեռանում են այլ երկրներ, տարբեր ժողովուրդների շրջանում տարածում քրիստոնեական վարդապետությունը, նրանցից շատերը նահատակվում են հեթանոսների ձեռքով կամ ճանապարհի փորձությունների զոհը դառնում: Մենակյաց աղջիկներից Նունեն անցնում է վրաց աշխարհ: Հետագայում բժշկելով վրաց Միհրան արքայի զավակին՝ նա մկրտում է արքայական ընտանիքին՝ ինչի շնորհիվ սկիզբ է դրվում վրաց ժողովրդի քրիստոնեացմանը: Դիոկղետիանոսի հետապնդումներից փրկված մենակյաց կույսերի մի խումբ՝ թվով ավելի քան երեք տասնյակ կուսակրոն աղջիկներ, որոնց թվում էին նաև Գայանեն և Հռիփսիմեն, հասնում է Հայաստան՝ բնակություն հաստատելով Վաղարշապատ քաղաքի մոտակայքում: Շուտով Դիոկղետիանոս կայսրն իմանում է, որ հեռացած աղջիկները, որոնց թվում էր նաև Հռիփսիմեն, անցել են Հայաստան և նամակ է գրում հայոց Տրդատ արքային: Դիոկղետիանոսն իր նամակում տեղեկացնում է մենակյաց կույսերի՝ Հայաստանում գտնվելու և Հռիփսիմեի մասին, ինչպես նաև ասում, որ աղջիկներին հայտնաբերելու դեպքում Տրդատը կարող է նրանց ետ ուղարկել Հռոմ կամ վարվել այնպես, ինչպես կցանկանա: Իմանալով այս մասին՝ Տրդատը շուտով հայտնաբերում է կույսերին, որոնց նաև անվանում են Հռիփսիմյան հավաքական անունով, և հրամայում է Հռիփսիմեին ամենայն պատվով և ընծաներով բերել իր մոտ: Տրդատը պահանջում է Հռիփսիմեից դառնալ

Ուխտ – երդում, խոստում, դաշինք՝ կնքված Աստծո և մարդու միջև:



Սուրբ Հռիփսիմե տաճարի (ք. Վաղարշապատ) կառույցի հատակագծի մասին: Փորձիր ստորև ներկայացված տեքստում նշված հատվածները գտնել հատակագծի նկարում: Ներքուստ խաչաձև է, որը ստեղծվել է գմբեթածածկ ծավալին կցված չորս խորաններով ու շրջանի 3/4 հատվածքի անկյունային խորշերով: Արտաքինից պարփակված է ուղղանկյուն ծավալի մեջ, անկյուններում ստացվել են չորս սենյակներ, որոնք աղոթասրահի հետ կապվում են անկյունային խորշերով:





Սուրբ Հռիփսիմե տաճար

իր կինը, սակայն մերժում է ստանում: Այդժամ նա հրամայում է բերել նաև Գայանեին, որպեսզի նա համոզի Հռիփսիմեին հնազանդվել իրեն: Սակայն Գայանեն, ընդհակառակը, հորդորում և քաջալերում է իր սանին՝ Հռիփսիմեին, անխախտ պահել Աստծու առաջ արված ուխտը: Այս ամենը տեղի է ունենում Տրդատ արքայի և պալատականների ներկայությամբ: Նրանք, ովքեր հասկանում էին հռոմեացիների լեզուն, բացատրում են Տրդատին, որ Գայանեն արքայի ասածին հակառակ խորհուրդներ է տալիս Հռիփսիմեին: Տրդատը բարկանալով ցանկանում է բռնությամբ հնազանդեցնել Հռիփսիմեին, սակայն չի հաջողում, և դեռ ավելին, Հռիփսիմեին հաջողվում է հեռանալ պալատից: Այդ գիշերն իսկ Տրդատի ուղարկած դահիճները տանջամահ են անում Հռիփսիմեին և նրա 33 ընկերուհիներին, հաջորդ օրը նույն ճակատագրին են արժանանում նաև սուրբ Գայանեն և ևս երկու միանձնուհի աղջիկներ:

Հռիփսիմյաց կույսերի նահատակությունը քրիստոնեական քաղաքակրթության նշանավոր էջերից է: Նրանց մասին հիշատակության օրեր ունեն մի շարք քրիստոնեական եկեղեցիներ:

Տրդատ III-ի կարևոր որոշումը: Գրիգոր Լուսավորչի գործունեությունը:

Հռիփսիմյան կույսերի դաժան մահապատժից հետո Հայաստանում սկսվում է մեծ փոփոխությունների շրջան: Տրդատ արքայի և պալատական մի շարք ծառայողների ու իշխանների մոտ հիվանդություններ են սկսվում: Հատկապես ծանր էր Տրդատի վիճակը. նրա դեմքը վայրի խոզի դիմագծեր էր ստացել և նա մուլեզնած գազանի պես թափառում էր Վաղարշապատ քաղաքի շրջակայքի անմարդաբնակ տարածքներում: Շատ անգամներ պալատականները փորձում են արքային ետ բերել քաղաք, սակայն չեն կարողանում. նախ, որովհետև բնական մեծ ուժի տեր էր և հետո մուլեզնած լինելու պատճառով թույլ չէր տալիս մոտենալ իրեն: Ըստ ավանդության այդ օրերին Խոսրովիդուխտին՝ արքայի քրոջը, այցելում է Աստծո ուղարկած մի հրեշտակ, ով հայտնում է, որ Տրդատին և մյուսներին



կարող է բժշկել միայն Արտաշատում գետնափոր խուցը նետված Գրիգորը: Երբ Խոսրովիդուխտը այս մասին պատմում է պալատականներին, շատերը նրան ծաղրում են՝ ասելով, թե ինչպես կարող է նա մտածել, որ Գրիգորը, ով ավելի քան 13 տարի է նետված է օձերով ու կարիճերով լեցուն խուցը, դեռ ողջ է: Սակայն ըստ ավանդության շուտով հրեշտակը կրկին հայտնվում է Խոսրովիդուխտին՝ ասելով նույն բանը, նույնիսկ հորդորելով ու սպառնալով նրան անպայման ազատել տալ Գրիգորին: Այս մասին կրկին պալատականներին և իշխաններին պատմելուց հետո արդեն որոշվում է մարդիկ ուղարկել Արտաշատ Գրիգորի ետևից: Գալով Արտաշատ՝ նրանք իրոք գտնում են Գրիգորին կենդանի և առողջ վիճակում իր խցում՝ Խոր Վիրապում: Անմիջապես նրան հասցնում են Վաղարշապատ՝ պատմելով պատահածի մասին: Երբ Գրիգորը՝ շրջապատված ժողովրդի և իրեն ուղեկցող պալատականների ու զինվորների խմբով մոտենում է մայրաքաղաք Վաղարշապատին իշխանները և Տրդատ թագավորը ընդառաջ են գնում նրան: Գրիգորը բժշկում է արքային, իշխաններին ու պալատականներին, որից հետո՝ տեղեկանալով Հռիփսիմյան կույսերի նահատակության վայրերի մասին, շրջում և գտնում է նրանց մասունքները, իսկ միանձնուհիների նահատակությունների վայրերում սկսում քրիստոնեական սրբատեղիների կառուցապատումը, որոնք հետագայում վեր են ածվում եկեղեցիների:



Վաղարշապատ քաղաքում է գտնվում Հռիփսիմյան ևս մեկ միանձնուհու՝ Մարիաների նվիրված Սբ. Շողակաթ եկեղեցին: Փորձիր պարզել, թե ինչու է եկեղեցին կոչվել Շողակաթ, ինչպես նաև տվյալներ Մարիանե միանձնուհու մասին:

Աշխատանք պատմական տեքստի հետ:

Դրվագներ Հայաստանում քրիստոնեության որպես պետական կրոն հռչակման պատմությունից:

Ծանոթացեք մեջբերված տեքստին՝ զուգահեռ ընթերցելով ստորև ներկայացված պնդումները:

- 1 տողի հրաման բառի առկայությունը հուշում է, որ քրիստոնեության տարածումը 301թ-ից սկսած տեղի է ունենում ոչ միայն թագավորի արտահայտած ցանկության, այլ նաև նրա կողմից հստակ տրված հրամանի հիման վրա:

Զեռնադրություն – Հայ եկեղեցու յոթ խորհուրդներից: Զեռնադրությամբ և օծությամբ եկեղեցուն ծառայության կոչված անձը Սուրբ Հոգու շնորհներն ու նվիրապետական կարգ է ստանում եկեղեցական արարողությունները կատարելու, Ավատերանը քարոզելու և ուսուցանելու:



Սր. Գայանե եկեղեցի,
ք. Վաղարշապատ:
Գտնե՛ք եկեղեցի բառի
բացատրությունը՝
օգտվելով nayiri.am կայքից:

- 2-3 տողերից կարելի է ենթադրել, որ IV դարում քրիստոնեական եկեղեցիների համար կարևոր կենտրոն էր Կեսարիա քաղաքը, քանզի հենց այնտեղ է մեկնում Գրիգորը եկեղեցականների ժողովի կողմից եպիսկոպոսապետի՝ կաթողիկոսի, աստիճան ստանալու համար:
- 4-5 տողեր. գնահատելով Տրդատ III-ի տված հրամանը, կարելի է փաստել, որ Տրդատը հետևողական էր քրիստոնեության ընդունման և տարածման իր որոշումն իրագործելիս:

Այս իրադարձություններից հետո, փաստորեն, Տրդատ Գ-ն պալատ է վերադարձնում Գրիգորին և վճռում քրիստոնեություն ընդունել՝ այն դարձնելով նաև պետական միակ հավատք:

Ագաթանգեղոս, Պատմություն հայոց

Թագավորը իսկույն տիրաբար հրաման տվեց ամենքի հավանությունը գործը երանելի Գրիգորի ձեռքը հանձնելու, որպեսզի նախկին հայրենի, հնամենի և նախնիների կույր կողմից Աստված անվանված չաստվածները անհիշատակ դարձնի՝ մեջտեղից ջնջի:

Բազմաթիվ եպիսկոպոսների ժողով եղավ Կեսարիա քաղաքում՝ որպեսզի ձեռնադրեն սուրբ Գրիգորին և նրան ավանդեն Քրիստոսի քահանայության խոնարհ աստիճանով և Աստծո փառավորության, եպիսկոպոսության բարձր աստիճանն ու մեծ փառքը: Սուրբ Ալետարանով նրան ձեռնադրեց եպիսկոպոսների ժողովը, որի գլխավորն էր Ղևոնդիոսը, որպեսզի նա իշխանություն առնի երկնքում ու երկրում:

Տրդատ Թագավորը Հայոց երկրի տարբեր կողմերին հրաման տվեց իր իշխանության նահանգներից գավառներից ուսման համար մատաղ մանուկների բազմություն բերել և նրանց վրա նմուտ ուսուցիչներ կարգել առավելապես քրմերի



ցեղին և նանց մանուկներին այնտեղ հավաքել, հարմար տեղերում խմբավորել և ապրուստի թռչակ նշանակել: Նրանց երկու մասի բաժանեցին, ոմանց տվեցին ասորի կրթության, ոմանց՝ հելլենական: Դրանով իսկ մի ակնթարթում՝ երկրի վայրենամիտ բնակիչները արագորեն ավետարանի ժառանգորդներ դարձան ու աստվածային բոլոր ավանդություններին ոչ մի բանով անտեղյակ չմնացին:

Այս իրադարձություններից հետո Տրդատ III-ն պալատ է վերադարձնում Գրիգորին և վճռում քրիստոնեություն ընդունել՝ այն դարձնելով նաև պետական միակ հավատք: Գործընթացն իրականացնելու համար Տրդատը Գրիգորին զորք է տրամադրում, որպեսզի նա նախ հարված հասցնի Հայաստանում կռապաշտություն տարածող հեթանոսական մեջանների: Գրիգորը հաջողությամբ իրականացնում է այս գործը, որից հետո որոշվում է նրան ուղարկել Կեսարիա քաղաքը հայոց աշխարհի եկեղեցու առաջնորդ՝ Եպիսկոպոսապետ ձեռնադրվելու համար: Եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո Գրիգորը շարունակում է քրիստոնեության քարոզչությունը հայոց մեջ՝ շարունակելով դեռևս առաջին դարում թաղեոս և Բարդուղիմեոս առաքյալների սկսած գործը: Վերադառնալով Հայաստան՝ Գրիգորը Եփրատ գետում՝ մկրտում է արքային, նրա ընտանիքը, արքունիքի ներկայացուցիչներին, բազմաթիվ իշխանների, զորականների և ժողովրդի: Ըստ ավանդության մկրտության պահին մեծ լուսավոր խաչ է երևացել երկնքում, ավելի լուսավոր, քան արեգակի լույսն էր: Մկրտության ժամանակ Գրիգորը արքային նոր անուն է տվել՝ Հուհաննես, ի պատիվ Հուհաննես Մկրտչի: Հայ առաքելական եկեղեցում մկրտվողին շնորհվում է քրիստոնյա սրբերից որևէ մեկի անունը:

Ամփոփում

Այսպիսով, Տրդատ III-ի կողմից քրիստոնեությանը պետական կրոնի պաշտոնական կարգավիճակ շնորհելը բացառիկ պատմական իրադարձություն է մեր ժողովրդի կյանքում: Նախ, այդ ժամանակ Հայաստանը արևմուտքից և հարավ-արևելքից սահմանակցում էր երկու՝ ռազմաքաղաքական առումով հզոր կայսրությունների՝ Հռոմի և Պարսակաստանի հետ: Իսկ դա նշանակում էր, որ քրիստոնեության ընդունումը բացասական է ընդունվելու այդ կայսրությունների կողմից: Եվ չնայած



հղ. 1



հղ. 2



դրան, Տրդատ արքան, ով իր գործունեության համար անվանվել է Մեծ, հասկանալով հասարակության կարիքները և պետության շահը, որոշում ընդունեց քրիստոնեությունը հռչակել պետական կրոն Հայաստանում: Այն փաստը, որ դեռևս Տրդատ III-ի իշխանության տարիներին հայ ժողովուրդը դիմակայեց քրիստոնեության պատճառով նախահարձակ եղած հռոմեական, իսկ V դարում՝ պարսկական զորքերին, խոսում է այն մասին, որ Տրդատը չի սխալվել: Բացի այդ, V դարում Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց այբուբենի ստեղծման հիմքում նույնպես ընկած է քրիստոնեությունը, քանի որ ժողովրդի մեջ քրիստոնեությունը ամրապնդելու և Աստվածաշունչը թարգմանելու կարիքից ծնվեց հայոց գրերի ստեղծման միտքը: Այսպիսով, աշխարհում առաջինը Հայաստանում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն 301թ-ին:



Հարցեր և առաջադրանքներ

1. Լսե՛ք Տրդատ III-ի՝ Գրիգոր Լուսավորչին ուղղված խոսքերից հատվածներ և պատասխանեք հարցերին (*հղում 1, 2*):
Այս խոսքերը ասվել են մինչև՝ Տրդատի հավատալը և քրիստոնեություն ընդունելու որոշման կայացումը, թե քրիստոնեություն ընդունելուց հետո: Ինչի՞ հիման վրա եք այդպես կարծում:
2. Դիտարկե՛ք Թադեոս առաքյալի նկարը (էջ): Ի՞նչ է պատկերված նրա ձախ ձեռքում, գտեք պատասխանը թեմայում բերված նկարներում և իմացեք:
3. Դերերով ընթերցեք Տրդատ III-ի և Գրիգորի երկխոսությունից մեջբերված հատվածը: Նախ հատվածներն ընթերցեք մտքում, իսկ հետո բարձրաձայն: Ընթերցելուց հետո պատճառաբանեք, թե ինչու հենց այդպիսի առոգանությանը ընթերցեցիք երկխոսության համապատասխան հատվածները, կամ առանձին տողերը, բառերը:





Հարցեր և առաջադրանքներ

Տրդատ III – Քանի անգամ քեզ խրատ ու պատվեր են տվել, որ իմ առջև չկրկնես քո առասպելանման խոսքերը, որ դու հարմարեցրել ու սովորել ես: Ես քեզ խնայեցի որպես վաստակավոր մարդու, որպեսզի ուղղվես՝ պաշտելով աստվածներին, իսկ դու նրանց սուտ արարիչ ես համարում:

Գրիգոր – Աստվածների մասին, որ ասում ես, թե աստվածներ են, դրանք իրականում ստեղծված են, որովհետև մարդկանց կողմից են պատրաստված և ճարտար ձեռքերով սարքված արձաններ են, մի քանիսը փայտե են, մյուսները՝ քարե, պղնձե, արծաթե կամ ոսկե:

4. Փորձեք տեքստով նկարագրել կամ նկարել պալատականների, իշխանների և այլ մարդկանց զարմանքը, երբ գետնափոր խցում 13 տարիների բանտարկությունից հետո իրենց առջև կանգնած տեսան ողջ և առողջ Գրիգորին:
5. Ընթերցեք III-IV դարերի հույն եկեղեցական գործիչ և պատմիչ Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունն աշխատությունից մեջբերված հատվածը և պատասխանեք հետևյալ հարցերին:
 - Ինչի՞ պատճառով է Մաքսիմիոս Դայան հարձակվում Հայաստանի վրա:
 - Ի՞նչպես է ավարտվում նրա արշավանքը:
 - Տեքստի ո՞ր հատվածների հիման վրա եք այդպիսի եզրակացության հանգում:
 - Ինչպիսի՞ն է պատմիչի վերաբերմունքը Հռոմի կայսեր հանդեպ: Ո՞ր տողերից կարելի է գլխի ընկնել այդ մասին:





Հարցեր և առաջադրանքներ

- Տրդատ III Մեծի կառավարման ո՞ր ժամանակահատվածի ընթացքում կարող է տեղի ունեցած լինել արշավանքը: Ո՞ր տողերից կարելի է այդ մասին իմանալ:

Եվսեբիոս Կեսարացի, Եկեղեցական պատմություն

«Բացի այդ, բռնակալի (Մաքսիմինոս Դայա) ձեռքով պատերազմ հարուցվեց հայերի դեմ՝ այն մարդկանց դեմ, որոնք հենց սկզբից բարեկամ էին ու դաշնակից հռոմեացիներին: Բայց որովհետև քրիստոնյա էին և եռանդով ու բարեպաշտությամբ երկրպագում էին Աստծուն, այս աստվածատյացը փորձեց նրանց ստիպել, որ զոհ բերեն կուռքերին ու դևերին, ուստի և դարձրեց նրանց թշնամի ու մարտնչող: Արդ՝ նա հենց ինքը իր բանակի հետ հայերի դեմ պատերազմելիս ջախջախվեց»:

ANIT

